Երկրաշարժերի նոր պահ Թուրքիայում

ԱՆԿԱՐԱ, 13 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ. Սեպտեմբերի 13-ին տեղական ժամանակով ժամը 14.55-ին Թուրքիայում տեղի է ունեցել 5.8 բալ ուժգնության երկրաշարժ, որի էպիկենտրոնը գտնվել է Քոջաելիում:

Ըստ թուրքական TRT հեռուստատեսության, այս երկրաշարժի պատճառով 173 մարդ է վիրավորվել, ընդ որում նրանք այդ վնասվածքները ստացել են իրենց բնակարանների լայսամուրներից ոուրս, ... Գյոլջուքում 7 հարկանի շենք է փլվել, առայժմ փլատակների տակից ընդամենը 2 մարդ են հանել:

Ստամբուլի համալսարանի պրոֆեսոր Սիմեոն Մեթեքսարան հեռուստատեսային իր ելույթում նշել է, որ երկրաշարժերը կարող են շարունակվել, եւ չի բացառվում, որ այդ շրջանում նույն ուժգնությամբ նոր ցնցումներ լինեն: Ժամը 14.55-ի ցնցումից հետո մինչեւ մեր ժամանակով 19.00-ն արձանագրվել է 9 մագնիսական 2.1-3.1 բալ ուժգնությամբ ցնցումներ:

Azg armenian daily

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

«Մենք պահանջում ենք անխախտ հավատարմություն բարեփոխումներին: Մենք ցանկանում ենք տեսնել գործող ժողովրդավարական հաստատություններ, որոնք կերաբխավորեն հարգանքը մեր չափանիշների նկատմամբ: Եթե կան հիմնախնդիրներ, ապա մենք կամենում ենք իմանալ, թե երբ եւ ինչպես են դրանք լուծվելու: Մենք պատրաստ չենք խանության գլուխ կանգնած) քաղաքական գործիչների, նշեց Եվրախորհրդի ներկայացուցիչը: Այսօր որոշ քաղաքական ուժեր պնդում են, թե ժողովրդավարության համար չենք հասունացել եւ կամ էլ աղքատ ենք մեզ թույլ տալու ժողովրդավարության պես «թերճաշի». «Ես խոսեցի հանդուրժողականության եւ հաշտության կարեւորության մասին», ահա դեպի Եվրախորհուրդ Ադրբեջանի նախագահ Ալիեւը հանդիպումներ են ունենում, որոնցից վերջինը տեղի ունեցավ Յալթայում»:

Թբիլիսիում սեպտեմբերի 15-ին տեղի է ունենալու եռակողմ Հայաստան-Վրաստան-Ադրբեջան խորհրդարանական սեմինար, որին մասնակցելու է ԱԺ խոսնակ Կարեն Դեմիրճյանը: Ռասել-Ջոնսթոնը խիստ կարեւորեց մարդու իրավունքներին

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Եվրոպան շատ բան է պահանջում իր անդամներից

Եվ միաժամանակ շատ բան էլ վերադարձնում է

ԱՐՄԵՆՊՐԵՍ

փոխզիջումների գնալ դրանց վերաբերյալ՝ ոչ անդամակցությունից առաջ եւ ոչ էլ հետո: Գործող ժողովրդավարությունը քաղաքական կայունության երաշխիքն է, իսկ քաղաքական կայունությունը՝ տնտեսական բարեկեցության նախադայման», երեկ ԱԺ-ում Թբիլիսի մեկնելուց առաջ հավաստեց Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ լորդ Ռասել-Ջոնսթոնը: Այս ամրագրումից արդեն հստակ է, որ Հայաստանը ոչ 99 թ. եւ ոչ էլ 2000 թ. առաջին կիսամյակում Եվրախորհրդի անդամ չի դառնա: Եվրախորհուրդը Հայաստանից ակնկալում է հիմնախնդիրների, իմա՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հստակ ծրագիր ե՞րբ եւ ինչպե՞ս, գործող ժողովրդավարության հաստատում, մարդու իրավունքների հարգում: «Գործող» մակդիրը Ռասել-Ջոնսթոնը քանիցս շեշտեց, ինչից կարելի է եզրակացնել, որ Եվրախորհուրդը Հայաստանից ակնկալում է ժողովրդավարական հաստատությունների իրական ամրակայում եւ պատրաստ չէ որեւիցե փոխզիջման. «Եվրախորհրդի արժեքները շեղություն չեն, որն իրենց կարող են թույլ տալ հարուստ երկրները: Դրանք հարկավոր են նաեւ կոմունիստական իշխանության տասնամյակների ընթացքում աղքատացած ձեր տնտեսությունների նման տնտեսությունները վերակառուցելու ջանքերի հաջողության համար», կարծես ի պատասխան հայաստանյան որոշ (նաեւ իշխանության գլուխ կանգնած) քաղաքական գործիչների, նշեց Եվրախորհրդի ներկայացուցիչը: Այսօր որոշ քաղաքական ուժեր պնդում են, թե ժողովրդավարության համար չենք հասունացել եւ կամ էլ աղքատ ենք մեզ թույլ տալու ժողովրդավարության պես «թերճաշի». «Ես խոսեցի հանդուրժողականության եւ հաշտության կարեւորության մասին», ահա դեպի Եվրախորհուրդ տանող այն ուղիները, որոնց, Ռասել-Ջոնսթոնի համոզմամբ, այլընտրանք չկա:

Երեւանից մեկնելով Թբիլիսի՝ Եվրախորհրդի ներկայացուցիչը վկայեց, որ իր հաջորդ հանգրվանն Ադրբեջանն է, ինքը պատրաստվում է ուղերձ հղել նախագահ Ալիեւին եւ այլ պաշտոնյաների՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում փոխզիջում ձեռք բերելու համար: ԵԽ-ն բարձր է գնահատում նախագահ Ռոբերտ Քոչարյանի հանդիպումները Հեյդար Ալիեւի հետ: Նա հատուկ ընդգծեց, որ ԵԱՀԿ Մինսկի խումբն առ այսօր լուրջ հաջողություններ չի հասել. «Դեպի առաջընթաց մեծ քայլ է, որ ձեր երկրի նախագահ Քոչարյանը եւ Ադրբեջանի նախագահ Ալիեւը հանդիպումներ են ունենում, որոնցից վերջինը տեղի ունեցավ Յալթայում»:

Թբիլիսիում սեպտեմբերի 15-ին տեղի է ունենալու եռակողմ Հայաստան-Վրաստան-Ադրբեջան խորհրդարանական սեմինար, որին մասնակցելու է ԱԺ խոսնակ Կարեն Դեմիրճյանը: Ռասել-Ջոնսթոնը խիստ կարեւորեց մարդու իրավունքներին նվիրված այս սեմինարի աշխատանքները, քանզի իր 50-ամյակը նշող ԵԽ-ն մարդու իրավունքները համարում է գործող ժողովրդավարության նախադայման:

ԵԽ խորհրդարանական վեհաժողովի նախագահի տպավորությունները Հայաստանից բավական գունեղ էին եւ ինքնատիպ, ամենաբնորոշը հայկական գինով հիացած լինելու հանգամանքն էր: Նա վկայակոչեց հռոմեական հայտնի խոսքը. «Ճշմարտությունը գինու մեջ է»: Այդ արտահայտության իմաստնությունը չի նվազել: Ցավոք, ժողովրդավարության ճանապարհից մեր սայթաքումները, ինչպես ժողովուրդն է ասում, գինով Եվրոպայում չեն ուտվում:

Ն. ԴԻԼԲԱՐՅԱՆ

ՁՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Գերմանիան 37 մլն մարկ կտրամադրի Հայաստանին

Հայաստանում է գտնվում Գերմանիայի միջկառավարական պատվիրակությունը: Երեկ բանակցությունների ավարտին ստորագրվեց փաստաթուղթ՝ լրացուցիչ ֆինանսական օգնություն 1999-2000 թվականների համար: Ընդհանուր գումարը կազմում էր 35 մլն գերմանական մարկ եւ գումարած 2 մլն մարկ, որպես դրամաշնորհ, որը տրամադրվելու է կառավարությանը տարբեր ոլորտներում ծրագրեր իրականացնելու նպատակով: Փաստաթղթի ստորագրումից հետո էկոնոմիկայի նախարար Արմեն Դարբինյանը մասնավորապես նշեց այն կարեւոր ծրագրերը, որոնք ընդգրկված են 37 մլն գերմանական մարկ գումարի մեջ՝ 20 մլն-ը կհատկացվի Արմավիրի մարզի ջրամատակարարման եւ ջրահեռացման խնդիրների լուծման ծրագրին, որը հնարավորություն կտա անմիջապես լուծել Բաղրամյանի եւ Մեծամորի շրջանների ջրամատակարարման եւ ջրահեռացման հարցերը: Կա համաձայնություն նաեւ 7 մլն գերմանական մարկի, որը Հայաստանի կողմից առաջարկվեց օգտագործել Շիրակի մարզի (Գյումրի) ջրամատակարարման ծրագիրն իրականացնելու նպատակով: Պայմանավորվածություն եղավ նաեւ 8 մլն մարկի մասին, որով վարկային միջոցներ կտրամադրվեն բանկային համակարգին՝ փոքր եւ միջին ձեռներեցության զարգացման նպատակով: Փաստաթուղթը գերմանական կողմից ստորագրեց ԱՊՀ անդամ երկրների, Միջին Ասիայի եւ Եվրոպայի հետ տնտեսական համագործակցության վարչության պետ Ոյներ Գյորդելերը: Վարկը տրամադրված է 40 տարի ժամկետով, 10 տարի վճարումից ազատված ժամանակահատված եւ գումարած տարեկան 0,75 տոկոսադրույքով: Կողմերը համաձայնվեցին 1999 նոյեմբերին Գերմանիայում անցկացնել Հայաստանի տնտեսությունը ներկայացնող միջոցառում:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐԿԱՐՅԱՆ

Երեւանում կստեղծվի նոր տպարան

ԵՐԵՎԱՆ, 13 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Եվրասիա» հիմնադրամի՝ մամուլին աջակցության ծրագրի շրջանակներում մոտ օրերս մայրաքաղաքում կստեղծվի ժամանակակից նոր սարքավորումներով տպարան եւ մամուլի տարածման կառույց: Այս մասին ասաց հիմնադրամի տարածաշրջանի տնօրեն Լորենս Այվազյանը: Նպատակն է՝ բերբերին տալ ամենալայն հնարավորությունը ազատորեն մրցակցելու համար: «Ազգի» տվյալներով տպարանը տրամադրվել է «Գինդ» ձեռնարկությանը

Հայաստանում կա 118.000 հաշմանդամ, 8000-ը երեխաներ են

ԵՐԵՎԱՆ, 13 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Կառավարության որոշմամբ, հաշմանդամների «Փյունիկ» միությանն է տրամադրվել Ծիծեռնակաբերդի խճուղի 16 հաստեղում գտնվող շինությունը, որի ընդհանուր տարածությունը կազմում է 5000 քառ.մ: Այս մասին ասաց միության նախագահ Հակոբ Աբրահամյանը՝ սեպտեմբերի 13-ին կայացած մամլո ասուլիսում: Նա նշեց, որ այն դառնալու է հաշմանդամների կրթամշակութային կենտրոն, որի վերանորոգման աշխատանքները իրականացնելու համար տարբեր երկրներում ստեղծվել են հանգանակություն կազմակերպող խմբեր: Հայաստանում ներկայումս կա 118.000 հաշմանդամ, որից 8000-ը երեխաներ են:

Մասնային ձեւակերպում չստացած փոխադրամիջոցների շահագործումն արգելվում է

ԵՐԵՎԱՆ, 13 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ պետական եկամուտների եւ ՆԳ նախարարների համատեղ հրամանով հաստատվել եւ գործում է ՀՀ մասնային սահմանով ներմուծվող տրանսպորտային միջոցների մասնային հսկողության եւ ձեւակերպման նոր կարգ, ըստ որի, ներմուծողի ցանկությամբ, տրանսպորտային միջոցների մասնային ձեւակերպումներն իրականացվում են տվյալ սահմանային մասնային կետում: Այս մասին հայտնեցին պետական եկամուտների նախարարության լրատվական ծառայությունից, նշելով որ տրանսպորտային միջոցները մասնային կետում չձեւակերպելու դեպքում մասնային մարմինը դրանց ուղեկցող փաստաթղթերի բնօրինակներն ուղարկում է նշանակման մասնատուն, իսկ փաստաթղթերի երկրորդ օրինակները փոխադրման ամփոփագրի հետ մեկտեղ տրվում են ներմուծողին: 10-օրյա ժամկետում պարտադիր մասնային մարմին ներկայացնելու եւ տրանսպորտային միջոցը ձեւակերպելու համար:

Նույն աղբյուրի համաձայն, պետավտոտեսչության մարմիններին հանձնարարված է վերոհիշյալ ամփոփագրի 10-օրյա ժամկետը լրացած եւ մասնային ձեւակերպում չստացած փոխադրամիջոցների շահագործումն արգելել եւ դրանք հանձնել տարածաշրջանային մասնաստներին:

«Կանաչ» նյութեր «կարմիր» խորհրդարանին չուղարկել

Սկիզբը էջ 1

Ազդեցիկ նախարարներից մեկը, որին նախատեսվում «Ազգն» առաջարկեց պարզաբանել, թե ինչո՞ւ է մինչեւ հոկտեմբեր հեռացվել բաշխիչ ցանցերի սեփականաշնորհումը եւ ի՞նչ տպասումներ կան ՄԱՀ-ի եւ ՀԲ-ի 52 մլն դոլարի վարկերի տրամադրման ժամկետներից, տխուր արձագանքեց. «Վախենում ենք իրենցից»՝ գլխով ցույց տալով խորհրդարանական դահլիճը եւ ապա կրկնս սկսեց համոզել, որ մամուլը պետք է փորձի այս ձախ (կարմիր) խորհրդարանը դեպի աջ բերել: Կարծում ենք, որ այս խորհրդարանին դեպի աջ բերելը սիզիֆյան աշխատանք է: Եթե դեպի կենտրոն գա, արդեն լուրջ նվաճում կլինի: Ակնհայտ է դառնում հեռընտրական կանխատեսումների ճշտությունը, էությամբ ձախ եւ զգալի մի հատվածով մեր հանրապետության կարմիր շրջանի նոմենկլատուրայի ներկայացուցիչներից բաղկացած խորհրդարանական մեծամասնությունը՝ «Միասնություն» խմբակցությունը, տոյական ձի կարող է դառնալ իր իսկ ղեկավար Վազգեն Սարգսյանի համար: Ազդեցիկ նախարարը նշեց, որ խորհրդարանի նման ձախ ընթացքը կարող է պատճառ դառնալ նախագահ եւ վարչապետ հարաբերությունների սրման. «Արդյունքում լիդեր կկորցնեմ»: Նախարարն իրավացի է, եթե չհաջողվի խորհրդարանական գործունեությամբ ապացուցել անխախտ հավատարմությունն ազատական բարեփոխումներին, ապա միջազգային կազմակերպությունները, ինչպես նաեւ անհատ ներդրողները տեսել, որի առաջին ծաղիկները երեւում են: Հայաստանում տասնապատիկ նվազել են օտարերկրյա ներդրումները, սեփականաշնորհման որեւէ ազդեցիկ գործարք չի կնքվել, իսկ միջազգային կազմակերպությունների վարկերը հետաձգվում են:

ԱԺ երկրորդ փոխխոսնակը դարձյալ «Միասնությունից» է. Յուրի Բախչյան

Ալբերտ Բազեյանի քաղաքական նշանակվելուց հետո թափուր մնացած ԱԺ փոխխոսնակի աթոռը երեկ 91 կողմ, 13 դեմ ձայներով գրավեց պետահրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Յուրի Բախչյանը, որը գրեթե մեկամյա փորձառություն ունի այս պատասխանում աշխատելու: Փետրվարյան իշխանափոխությունից հետո Յուրի Բախչյանը զբաղեցրեց հրաժարական տված փոխխոսնակ Կարապետ Ռուբինյանի տեղը: Յուրի Բախչյանն ընտրվեց առանց մրցակցի. «Միասնություն» խմբակցության ղեկավար Անդրանիկ Մարգարյանը հրապարակեց իր վճռոն առաջադրման վերաբերյալ, եւ խորհրդարանական մյուս թեւերը դրսեւորեցին փոխըմբռնում: Յուրի Բախչյանին հարցեր չտրվեցին, ելույթ ունեցողների շարքում նրա կուսակցական գինակից Գագիկ Մինասյանն էր, կոմունիստ Գագիկ Թադեւոսյանը եւ «Կայունություն» խմբի նախագահ Հովհ. Հովհաննիսյանը, որի անունն, ի դեպ, բանավեճերի սպասին շրջանում շոշափվում էր իբրեւ փոխխոսնակի թեկնածու, եթե հանկարծ «Միասնությունը» որոշի այդ տեղը զիջել: Հովհ. Հովհաննիսյանը շեշտեց, որ Յուրի Բախչյանի հետ ինքը ծանոթացել էր, երբ վերջինս քաղխորհրդի նախագահի առաջին տեղակալն էր:

Այսպիսով, ԱԺ-ում թափուր է պետահրավական հանձնաժողովի նախագահի պաշտոնը, որին, կարծում ենք, դարձյալ աղարդյուն կփորձեն հավակնել խորհրդարանական փոքրամասնության ներկայացուցիչները: Ի մասնավորի՝ «Օրինաց երկիր» խմբակցության նախագահ Արթուր Բաղդասարյանը: Կարծում ենք, «Միասնությունն» ԱԺ-ի համար առանցքային ֆինանսա-տնտեսական, բյուջետային եւ տնտեսական հարցերի հանձնաժողովի հետ մեկտեղ երկրորդ այս հանձնաժողովի կառավարման ղեկը կպահի իր ձեռքում՝ հեռատես նավաղեցի պես:

Սեպտեմբերի 13-ին խորհրդարանում կազուսներ շատ կային: Այսպես, հինգ պատգամավոր, իրենց կամքից անկախ, գրանցվեցին օրակարգի վերաբերյալ ելույթ ունենալու համար, նախագահի առարկությունները «Լիզինգի մասին» օրենքի վերաբերյալ ոչ մի կերպ ճիշտ ձեւակերպում չէին ստանում, պատգամավոր Վանո Սիրադեղյանը եկավ խորհրդարան, բայց չմասնակցեց նիստերին: Պատգամավոր Լեոնիդ Հակոբյանը հայտարարեց, թե «կանաչ» (իմա՝ անորակ) նյութեր մեզ այսուհետ չուղարկեմ: Արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանն անկեղծորեն զարմացավ՝ նախագահի արարքությանն արժանացած եւ քաղաքացիական օրենսգրքի բացող քաղաքական կյան

հետ հակասության մեջ գտնվող այս նախագիծն ընդունվել էր պատգամավորների նախաձեռնությամբ՝ «Երկրպահ» խմբի անդամների կողմից, իսկ ներկայացրել էր Անդրանիկ Մանուկյանը: «Կանաչ» նյութն այսպիսով խորհրդարանից էր եւ ոչ թե կառավարությունից: Ի վերջո, խորհրդարանը մերժեց եւ նախագահի առարկությունները, եւ օրենքն ամբողջությամբ՝ հույս ունենալով ապագայում ստեղծել կայուն օրենքի ֆինանսական վարձակալության (լիզինգի) մասին: Հետաքրքիր մի հանգամանք՝ անգամ ընդդիմադիր պատգամավորները, քվեարկությունից առաջ, չգիտես ինչու, հարցնում էին Կարեն Դեմիրճյանին ինչպես քվեարկել՝ կո՞ղմ, թե՞ դեմ: Խորհրդարանականներն ասիճանաբար կվարժվեն օրենսդիր աշխատանքին, բայց ինչքանո՞վ կբարձրանա ԱԺ օգակար գործողության գործակիցը, ցույց կտա ժամանակը, թեեւ Կարեն Դեմիրճյանը հույս ուներ, որ Յուրի Բախչյանի ընտրությունն ՕԳԳ-ն կբարձրացնի:

Եթե այսօր կարունակվի, եւ ավելի պարզորոշ կդառնան ձախ խորհրդարանի մտադրությունները՝ ամրապնդվե՞լ կարմիր գոտում, թե՞ գալ դեպի կենտրոն: Մինչեւ ընտրական բոհուրոհը «Միասնություն» խմբակցության հինգ կուսակցությունները՝ «Հանրապետականը» եւ ՀԺԿ-ն, հայտարարում էին, թե իրենք կենտրոնամետ էին, մեկը՝ աջ, մյուսը՝ ձախ: Բայց կառավարության անդամներն արդեն արձանագրում են՝ այս խորհրդարանում աջեր չկան, ցավոք, աջերը դուրս են մնում նաեւ խորհրդարանից դուրս

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Ը տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի խմբագիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թաղ՝ 529353, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՈՐԵԱՆ / հեռ. 562863
Հանձնարարական
ծառայություն / 562941
Apple Macintosh
հանձնարարական ստուգումը
«Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձուում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone 521635

ՈՒՇԱՐԿ ԱՎԱԳՅԱՆԸ
47 Hanrapetoutian St.,
Yerevan, Armenia, 375010
digitised by A.R.A.R.@

ԽԱՉԱՆԱՌ

...ՊՐՈՖԱՅԱԿ...

1. Չեմ կոսիոնդրոտ. ...ոսոֆակի մեջ... դիալում: 6. Սրցանարեզ: 7. Հեղինակ ... Լիներ: 2. Սենեգալի Հանրապետության ... Ինվոլուտ հարուստ, նեղացեալ աման: 9. ... նայարարանալը...: 3. ...ՀՆԳԱՎԿԱՏԻՆԻ խորհրդայրս Ինամամտոր դիտակավոր... կարգի թոյուն: 4. Շուշանագրքույթի ...: ...գարգանին. հայ ժողովրդի մեծ բարե... ...յունիկ բանալա ջուս, բրհ ...կամ ...Նոյնաբանակ ...ոսոֆակի ...ՊՐՈՖԱՅԱԿ... ...կուտ՝ նախանձկոտ ...հեղինակը: 11. Լեռնային ճնշագկահում... բանի նոպասող եւ առաջ մղող խթան: ...ագաստոյթ ...ասարան տարածք. խրոց: 12. ...ասեցնայրս գիրտ հասակ... Ինչպես... ...ոստիա. գարգանին. «Եղծ աղանդոց» ...ագաստոյթ ...հեղինակը: 14. ...վասուս» ...կա՝ տնրաստ: 8՝ Հոդեկ-գիտ...դամկան... ...ի Հանրապետության ազգային հիմ... Ուժասահ: 16. Անորոնաթ: 17. Մ... ...մասնա: 9. Պետությունի Արեմտյան

...ՊՐՈՖԱՅԱԿ...

1. ...ոսոֆակ՝ Հ՝ մանրամասն... 4. Բանանոն: 5. Կերտի: 7. Քար... տաբ: 8. Մկնակ: 10. Ուրբանոն: 12. ...

...ՄԱՆՉՈՒՐԻ...

...ոսոֆակ՝ Հ՝ մանրամասն...

...ՊՐՈՖԱՅԱԿ...

1. ...դայրս՝ թագուհի Ա. Բարսեղ Յուսոն. 6. Սրցանարեզ: 7. Հեղինակ ... Լիներ: 2. Սենեգալի Հանրապետության ... Ինվոլուտ հարուստ, նեղացեալ աման: 9. ... նայարարանալը...: 3. ...ՀՆԳԱՎԿԱՏԻՆԻ խորհրդայրս Ինամամտոր դիտակավոր... կարգի թոյուն: 4. Շուշանագրքույթի ...: ...գարգանին. հայ ժողովրդի մեծ բարե... ...յունիկ բանալա ջուս, բրհ ...կամ ...Նոյնաբանակ ...ոսոֆակի ...ՊՐՈՖԱՅԱԿ... ...կուտ՝ նախանձկոտ ...հեղինակը: 11. Լեռնային ճնշագկահում... բանի նոպասող եւ առաջ մղող խթան: ...ագաստոյթ ...ասարան տարածք. խրոց: 12. ...ասեցնայրս գիրտ հասակ... Ինչպես... ...ոստիա. գարգանին. «Եղծ աղանդոց» ...ագաստոյթ ...հեղինակը: 14. ...վասուս» ...կա՝ տնրաստ: 8՝ Հոդեկ-գիտ...դամկան... ...ի Հանրապետության ազգային հիմ... Ուժասահ: 16. Անորոնաթ: 17. Մ... ...մասնա: 9. Պետությունի Արեմտյան

...ՄԱՆՉՈՒՐԻ...

...ոսոֆակ՝ Հ՝ մանրամասն...

...ՊՐՈՖԱՅԱԿ

Ազգային

Ոտենում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական ընտրությունների օրը: Աժ-ում ընտրությունների մասին օրենքի քննարկումների բուռն պայքար է ծավալվել ինչպես տարբեր կուսակցությունները, այնպես էլ խմբակցությունները ներկայացնող պատգամավորների միջև հակադիր այն հարցի շուրջ, թե ընտրությունների ժամանակ ինչ հարաբերակցություն պետք է հակադրվի մեծամասնական ու համամասնական կարգին, ինչպես նաև, թե ում կողմից պետք է կազմվեն ընտրական հանձնաժողովները՝ կառավարությա՞ն, թե՞ Աժ-ի:

Վիճաբանող կողմերից յուրաքանչյուր պատգամավոր ցանկանում է առաջադրել իր տեսակետը պնդելով, թե այս կարգով ընտրություններն անցկացնելու դեպքում կկանխվեն կեղծիքներն ու խախտումները, միաժամանակ շեշտելով, որ նախորդ ընտրությունների ժամանակ իրոք տեղ են գտել մեծ չափերի եթե օրենքը չլրացվի Աժ պատգամավորի, ինչպես նաև հանրապետության նախագահի պատասխանատվության բարձրացման անհրաժեշտությամբ: Այդ ուղղությամբ կարելոր ենք համարում ինչպես Աժ պատգամավորների, այնպես էլ նախագահի՝ իրենց ընտրողների առաջ հաշվետվության կարգով պարբերաբար հանդես գալու պրակտիկան: Պատգամավորներն իրենց հանդիպումների ընթացքում պետք է ընտրողներին պատմեն, թե ինչպիսի առաջարկություններով են հանդես եկել կամ ինչ դիրք են գրավել քննարկվող հարցերի վերաբերյալ: Լավ կլիներ, որ հանրապետության նախագահը թեկուզ ամիսը մեկ անգամ հաշվետվությամբ հանդես գար ժողովրդի առաջ:

Հարկ ենք համարում նաև նշել, որ երկրում ոչ մի նշանակալից դրական տեղաշարժ չի կարող կատարվել, ու կշարունակվի սեփականաշնորհման անվան տակ կատարվող ժողովրդական ունեցվածքի թալանը, եթե հանրապետության նախագահի հրացնել, եթե պետք չէ դատել հանցագործներին, ապա ինչի համար են պահում դատախազական հսկայական համակարգը դատարանները, դատախազությունն ու արդարադատության, ներքին գործերի ու ազգային անվտանգության նախարարությունները: Մի՞թե վերոհիշյալ պատժիչ հիմնարկների անհրաժեշտությունը վերացել է կամ էլ դրանք բարոյական իրավունք չունեն դատելու: Կամ ի՞նչ է նշանակում «նախ անհրաժեշտ է մարվել, հետո խոսել դատաքարտելու մասին»:

Արդարադատությունը պահանջում է, որ ամեն մի հանցանք դատապարտվի, իսկ հանցագործը պատժվի: Երկիրն աղետալի վիճակի հասցնելու գործում մի շարք օբյեկտիվ գործոնների կողքին վճռական դեր են խաղացել իշխանությունների սխալ եւ հանցագործ գործողությունները, որոնց հետեւանքով ազգաբնակչության բացարձակ մեծամասնությունը մատնվել է սովի ու գրսի եւ աներեւակայելի տառապանքների, հարյուր հազարավոր ընտանիքներ սիրված լքել են տուն ու տեղը եւ բռնել պանդխտության ճանապարհը, էլ չենք խոսում այն մասին, որ իշխանությունների տնտեսական քաղաքականության հետեւանքով հիմնովին ավերվել է երկրի հզոր արդյունաբերական համալիրը, անվերականգնելի վնաս է հասցվել բնությանը: Կամ մի՞թե հանրապետությունում կյանքի միջին տեւողության զգալի նվազումը, ծննդաբերության շեշտակի նվազումը, մահացությունների կտրուկ ավելացումը, բազմաստեղակ հիվանդությունների տարածումը եւ այլ բացասական երեւույթների համար նախկին վարչակարգը մեղավոր չէ:

Ահա թե ինչու գտնում ենք, որ նախկին իշխանությունների գործունեությանը օբյեկտիվ գնահատական տալու, հանցագործությունները բացահայտելու եւ մեղավորներին արժանի պատիժ տալը ոչ միայն արդարությունը վերականգնելու երաշխիք կարող է հանդիսանալ, այլեւ կբարձրացնի ներկա իշխանավորների պատասխանատվությունը իրենց վստահված կարեւորագույն գործի նկատմամբ:

Հարկ ենք համարում վերանայել Աժ-ի կողմից հանրապետության նախագահի մասին ընդունված օրենքը եւ դրանում կատարել մի քանի փոփոխություններ, սահմանափակել ընձեռած լիազորությունների մի զգալի մասը, այդ թվում մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների նշանակման իրավունքը, ինչպես, օրինակ, հանրապետության դատախազի, մարզպետների եւ այլն, այդ պաշտոնների համար սահմանելով ընտրական համակարգ:

Նախագահի հրաժարականի դեպքում նրան ցմահ շնորհվելիք բազմաթիվ արտոնությունների վերացումը իր հերթին կնպաստի նախագահի պաշտոնում արժանի թեկնածուների առաջադրմանը:

Երկրում կոռուպցիայի ու կաշառակերության դեմ արդյունավետ պայքար կազմակերպելու նպատակով անհրաժեշտ ենք համարում բոլոր դեկավար պաշտոնյաներ զբաղեցնող անձանց համար սահմանել ամենամյա պարտադիր հայտարարագիր ներկայացնելու պրակտիկան: Լավ կլինի, որ պաշտոնական մամուլում հրապարակվեն այդ հայտարարագրերը, մանրամասնորեն նշվեն բոլոր եկամուտները եւ ծախսերը:

Թող մեզ ներեն մեծարգո իշխանության բարձրաստիճան պաշտոնյաները, որ օրերս Աժ-ում քննարկված պետական բարձրաստիճան պաշտոնյաների աշխատավարձերի բարձրացման կապակցությամբ արտահայտեմ մեր անկեղծ կարծիքը: Սահմանադրությունը սկսվում է «Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է» բառերով: Դրանից հետեւում է, որ պետության հիմնական օրենքով նախատեսվում է սոցիալական արդարության սկզբունքը: Որքանո՞վ է արդարացված ձեր պահանջը, պարոնայք, երբ ձեր իսկ ղեկավարած երկրում բնակչության բացարձակ մեծամասնությունը գտնվում է ծայրաստիճան աղքատության մեջ: Ձեզ լավ հայտնի է, որ երկրում միջին աշխատավարձը տասնապատիկ ցածր է սպառողական զամբյուղից, որ գործազուրկ մարդկանց միայն մի փոքր մասն է ստանում ողորմելի նպաստ կոչվածը, իսկ թոշակառուների

ՕՐԵՆՍԴՐՐՆԵՐ

Պատգամավորը պետք է լինի պարկեշտ եւ հայրենասեր մարդ

հասնող կեղծիքներ:

Սակայն, մեր համոզմամբ, դրանց պատճառն ամենեւին էլ մեծամասնականի ու համամասնականի հարաբերակցությունը չէր: Հիմնական պատճառը (որ, ցավոք, առաջիկա ընտրությունների ընթացքում իր որոշիչ դերն անպայման կկատարի) այն է, որ գործող օրենքով Աժ պատգամավորներն օգտվում են բազմաթիվ արտոնություններից, որոնք հրապուրիչ դեր են խաղում եւ մեծ ցանկություն առաջացնում կարիերիստական ձգտումներ ունեցող մարդկանց համար, որոնք էլ ամեն միջոց գործադրում են՝ պատգամավորական մանդատին տիրանալու:

Այդ արտոնություններից առանձնապես հրապուրիչ է պատգամավորական անձեռնմխելիությունը հատկապես քրեական աշխարհի անձանց համար այն պարզ պատճառով, որ ընտրվելով Աժ պատգամավոր հանցագործ տարրերը խուսափում են կատարված հանցագործությունների համար պատասխանատվությունից ու պատիժ կրելուց պատգամավորական ժամանակամիջոցի ընթացքում, իսկ դրանից հետո էլ, ամենայն հավանականությամբ, ժամանակը մոռացության կմատնի հանցագործությունը, կամ էլ կկորցնի վաղեմությունը: Մինչդեռ այդ ժամանակամիջոցում որպես Աժ պատգամավոր նա կվայելի մանդատի ընձեռած բոլոր բարիքները, իսկ մյուս կողմից էլ պատշաճ տեղ կապահովի հասարակության մեջ, կհասնի եկամտաբեր պաշտոնի եւ այլն:

Արդյոք Աժ-ն ամեն տեսակ բախտախնդիր ու կարիերիստական նպատակներ հետապնդող մարդկանցից զերծ պահելու կամ գոնե նրանց մուտքն այնտեղ նվազագույնի հասցնելու նպատակով անհրաժեշտ ենք համարում կիրառել ստորեւ բերված սկզբունքը, համաձայն որի Աժ պատգամավորն իր պատգամավորական ողջ ժամանակամիջոցում պետք է զբաղվի միայն պատգամավորական գործունեությամբ, հետեւաբար պետք է ազատվի իր նախկին աշխատանքից, դադարեցնի աշխատանքների համատեղումը: Մինչեւ իր թեկնածության առաջադրումը մարդը պետք է կատարի իր ընտրությունը պատգամավորության ու նախկինում զբաղեցրած պաշտոնի միջեւ:

Միանգամայն տրամաբանական է, որ սովորական մահկանացուն ի վիճակի չէ միաժամանակ կատարելու երկու պատասխանատու եւ հաճախ դժվար իրագործելի աշխատանքներ, թեկուզ նա օժտված լինի որոշակի տաղանդով, մանավանդ այնպիսի պայմաններում, երբ այդ աշխատանքները նա պետք է կատարի միմյանցից զգալի հեռավորության վրա: Բնական է, որ գործարար կամ գործարանատեր անձն իր ողջ հնարավորությունը, ուժն ու ժամանակը կտրամադրի հիմնականում եւ առաջին հերթին հիմնական աշխատանքին, հետեւաբար հաճախ կբացակայի Աժ նիստերից, իսկ մասնակցության դեպքում էլ կցուցաբերի պասսիվություն: Մեր այս եզրակացությունը կարելի է հաստատել ներկա Աժ-ի աշխատանքների վերլուծությամբ պարբերաբար բացակայող պատգամավորները առանց բացառության զբաղվում են եկամտաբեր գործունեությամբ:

Հաջորդ հարցը, որին կանենք ենք անդրադառնալ, վերաբերում է Աժ-ի պատգամավորների թվին: Կարծում ենք, որ մեր փոքրիկ եւ աղքատիկ պետության համար 190 պատգամավորներից կազմված Ազգային ժողով ունենալը չափից ավելի մեծ բեռություն է, պարզապես, ուղղակի ավելորդ բեռ-բալաստ է, պարզ է դառնում, որ պատգամավորների թիվը կիսով չափ կրճատելու դեպքում Աժ աշխատանքները բոլորովին չեն տուժի, ընդհակառակը, արդյունավետությունը եւս կբարձրանա, քանի որ նիստերը կընթանան էվորուի պայմաններում:

Պատգամավորների քանակը պակասեցնելու շնորհիվ մեծ չափով կնվազեն Աժ ծախսերը: Փորձենք հաշվել, թե որքան ծախս են նստում պետական բյուջեի վրա ամեն մի բալաստ-պատգամավոր առանձին եւ բոլորը միասին տարվա ընթացքում եւ պատգամավորական ժամանակաշրջանում: Առավոտ հաշվումներով այդ խնայողությունների հաշվին կարելի կլիներ կառուցել միջին հզորության մեկ հիդրոէլեկտրակայան կամ էլ տասնյակ բնակելի շենքեր: Իսկ ազատված պատգամավորներից կազմված Աժ-ն ներկայիս շաբաթական երկուսուկեսօրյա աշխատանքի դիմաց կարող է աշխատել շաբաթական 5 օր:

Ընտրությունները ազատ եւ արդարացի անցկացնելու գործում կարեւոր նշանակություն կունենա, եթե նախընտրական արշավի ընթացքում զանգվածային լրատվության միջոցներով հրապարակվեն տեղեկություններ թեկնածուների բարոյական վարքագծի մասին:

Գործին էապես կնպաստի, եթե ներկայումս Աժ քննարկվող եւ առաջին ընթերցմամբ ընդունված «Ընտրական օրենքը» լրացվի պատգամավորներին մանդատից զրկելու կամ, ինչպես ընդունված է ասել՝ ետ կանչելու գործնական մեխանիզմով:

Հարկ ենք համարում նաեւ նշել, որ վերը շարադրված առաջարկությունները չեն կարող բացառել առաջիկա ընտրությունների կեղծիքներն ու անօրինականությունները, եթե հանրապետության նախագահը եւ նրա գլխավորած կառավարությունը շարունակեն նախկին իշխանությունների որդեգրած կառավարման բազարայանական փիլիսոփայությունը կատարելով «կադրային փոփոխություններ» եւ սակագների ու հարկային դանձումների անվերահսկելի բարձրացումների միջոցով պետական բյուջեի ճեղքվածքը փակելու մեթոդով երկարաձգելով իշխանության լծակները պահելու քաղաքականությունը: Բարձրաստիճան պաշտոնյաների փոխատեղումները նմանվում են գումարելիների տեղափոխության, որից գումարը մնում է անփոփոխ: Անժխտելի է մնում այն իրողությունը, որ որոշ կոսմետիկական միջոցառումների կիրառմամբ հնարավոր չի երկիրը դուրս բերել այն աղետալի վիճակից, որի մեջ հայտնվել է նախկին իշխանությունների մեղքով: Դրա համար անհրաժեշտ են արմատական փոփոխություններ, սկսելով դրանք անպատասխանատվության ու անպատժելիության վերացումից, որոնց հետեւանքով էլ ստեղծվել է այս անհուսալի իրավիճակը, եւ քանի դեռ հանրապետությունում կպահպանվի ներկայումս իշխող անարխիան, ոչ մի հարց մեր երկրում չի կարող լուծվել, տնտեսությունը կշարունակի քայքայվել, բնակչության կենսամակարդակը օրինաչափորեն իջնել:

Ինչպես եւ պետք է սպասվեր, զգալով վերահաս վտանգը, նախկին իշխանավորներից շատերն արդեն գործի են դրել տարբեր լծակներ եւ միջոցներ հանցագործ գործողությունների հեղինակներին պատժանության տակ վերցնելու, առաջին հերթին օգտագործելով լրատվության միջոցները: Տարբեր քաղաքական գործիչների միջոցով ծավալվում է քարոզչություն, արվում են դատողություններ մեղքերը մեղմացնելու եւ նույնիսկ հանցագործներին արդարացնելու նպատակով: Այսօր հաճախ կարելի է կարդալ կամ լսել՝ «մեղավորներ չփնտրենք», «վիուկների որսով չզբաղվենք», «մի դատիր, որ չդատվես» եւ այլ բազմաթիվ ու տարատեսակ. Պարոնյանի տերմինաբանությամբ ասած՝ «մեղմացուցիչ հանգամանքներ»:

Ազգային ժողովի փոխնախագահ Ա. Բազեյանը կոչ է անում «մի դատիր, որ չդատվես»: Թող թույլ տրվի հարցնել, եթե պետք չէ դատել հանցագործներին, ապա ինչի համար են պահում դատախազական հսկայական համակարգը դատարանները, դատախազությունն ու արդարադատության, ներքին գործերի ու ազգային անվտանգության նախարարությունները: Մի՞թե վերոհիշյալ պատժիչ հիմնարկների անհրաժեշտությունը վերացել է կամ էլ դրանք բարոյական իրավունք չունեն դատելու: Կամ ի՞նչ է նշանակում «նախ անհրաժեշտ է մարվել, հետո խոսել դատաքարտելու մասին»:

Արդարադատությունը պահանջում է, որ ամեն մի հանցանք դատապարտվի, իսկ հանցագործը պատժվի: Երկիրն աղետալի վիճակի հասցնելու գործում մի շարք օբյեկտիվ գործոնների կողքին վճռական դեր են խաղացել իշխանությունների սխալ եւ հանցագործ գործողությունները, որոնց հետեւանքով ազգաբնակչության բացարձակ մեծամասնությունը մատնվել է սովի ու գրսի եւ աներեւակայելի տառապանքների, հարյուր հազարավոր ընտանիքներ սիրված լքել են տուն ու տեղը եւ բռնել պանդխտության ճանապարհը, էլ չենք խոսում այն մասին, որ իշխանությունների տնտեսական քաղաքականության հետեւանքով հիմնովին ավերվել է երկրի հզոր արդյունաբերական համալիրը, անվերականգնելի վնաս է հասցվել բնությանը: Կամ մի՞թե հանրապետությունում կյանքի միջին տեւողության զգալի նվազումը, ծննդաբերության շեշտակի նվազումը, մահացությունների կտրուկ ավելացումը, բազմաստեղակ հիվանդությունների տարածումը եւ այլ բացասական երեւույթների համար նախկին վարչակարգը մեղավոր չէ:

Ահա թե ինչու գտնում ենք, որ նախկին իշխանությունների գործունեությանը օբյեկտիվ գնահատական տալու, հանցագործությունները բացահայտելու եւ մեղավորներին արժանի պատիժ տալը ոչ միայն արդարությունը վերականգնելու երաշխիք կարող է հանդիսանալ, այլեւ կբարձրացնի ներկա իշխանավորների պատասխանատվությունը իրենց վստահված կարեւորագույն գործի նկատմամբ:

Հարկ ենք համարում վերանայել Աժ-ի կողմից հանրապետության նախագահի մասին ընդունված օրենքը եւ դրանում կատարել մի քանի փոփոխություններ, սահմանափակել ընձեռած լիազորությունների մի զգալի մասը, այդ թվում մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների նշանակման իրավունքը, ինչպես, օրինակ, հանրապետության դատախազի, մարզպետների եւ այլն, այդ պաշտոնների համար սահմանելով ընտրական համակարգ:

Նախագահի հրաժարականի դեպքում նրան ցմահ շնորհվելիք բազմաթիվ արտոնությունների վերացումը իր հերթին կնպաստի նախագահի պաշտոնում արժանի թեկնածուների առաջադրմանը:

Երկրում կոռուպցիայի ու կաշառակերության դեմ արդյունավետ պայքար կազմակերպելու նպատակով անհրաժեշտ ենք համարում բոլոր դեկավար պաշտոնյաներ զբաղեցնող անձանց համար սահմանել ամենամյա պարտադիր հայտարարագիր ներկայացնելու պրակտիկան: Լավ կլինի, որ պաշտոնական մամուլում հրապարակվեն այդ հայտարարագրերը, մանրամասնորեն նշվեն բոլոր եկամուտները եւ ծախսերը:

Թող մեզ ներեն մեծարգո իշխանության բարձրաստիճան պաշտոնյաները, որ օրերս Աժ-ում քննարկված պետական բարձրաստիճան պաշտոնյաների աշխատավարձերի բարձրացման կապակցությամբ արտահայտեմ մեր անկեղծ կարծիքը: Սահմանադրությունը սկսվում է «Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է» բառերով: Դրանից հետեւում է, որ պետության հիմնական օրենքով նախատեսվում է սոցիալական արդարության սկզբունքը: Որքանո՞վ է արդարացված ձեր պահանջը, պարոնայք, երբ ձեր իսկ ղեկավարած երկրում բնակչության բացարձակ մեծամասնությունը գտնվում է ծայրաստիճան աղքատության մեջ: Ձեզ լավ հայտնի է, որ երկրում միջին աշխատավարձը տասնապատիկ ցածր է սպառողական զամբյուղից, որ գործազուրկ մարդկանց միայն մի փոքր մասն է ստանում ողորմելի նպաստ կոչվածը, իսկ թոշակառուների

ստացածը հազիվ բավականացնում է մի կտոր «երկնից կախված չոր հաց» գնելուն, էլ չենք խոսում դեղորայքի մասին: Ձեզ պետք է հայտնի լինի, որ ներկայումս ներքեւներում մուրացկանության աստիճանին հասած տասնյակ հազարավոր մարդիկ ոչ պակաս արժանիքներ ու վաստակ ունեն, քան վերեւներում գտնվող շատ-շատերը: Այս պարագայում մենք գտնում ենք, որ ձեր ներկայացրած աշխատավարձի բարձրացման պահանջն իր էությամբ անբարոյական է:

Մենք անհիմն ենք համարում այն պնդումը, թե աշխատավարձի բարձրացումն արվում է կաշառակերության դեմ պայքարելու համար, քանի որ համաշխարհային պրակտիկան առաջարկում է բացառապես նյութապես ապահովված բարձրաստիճան չինովնիկները, երեւույթ, որը հաստատվում է «ախորժակը ուտելու ժամանակ է բացվում» ժողովրդական իմաստությամբ:

Այդ կապակցությամբ գտնում ենք, որ որոշում կայացնելուց առաջ Աժ-ի պատգամավորները, ինչպես նաեւ գործադիր իշխանության ղեկավարները լավ մտածեն ընդունվելիք որոշման տնտեսական ու քաղաքական հետեւանքների մասին:

Քանի որ առաջիկայում տեղի են ունենալու Աժ-ի հերթական ընտրությունները, կոչ ենք անում պատգամավորության հավանական թեկնածուներին՝ մի փոքր զսպեն իրենց ախորժակները, ամեն սեղան նստելու ժամանակ հիշեն, որ երկրում հարյուր հազարավոր մարդիկ մատնված են սովի, հրաժարվեն սեւ խավիարից, իսկ արձակուրդը Հավայան կղզիներում կամ այլ աշխարհահռչակ առողջարաններում անցկացնելու փոխարեն անցկացնեն հայրենիքում:

Մենք կոչ ենք անում մեր բոլոր հայրենակիցներին առաջիկա ընտրությունների ժամանակ իրենց ձայնը տալ հայրենասեր ու անձնազոհ, երկրի առաջայի հոգսերով ապրող մարդկանց, ովքեր պատրաստ են ժողովրդի հետ շենացնելու մեր հայրենիքը:

ՇԱՎԱՐՇ ԳՈՆԻԵԼՅԱՆ
ՍԵՐԳԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ
Հայրենական պատերազմի վետերաններ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Ամերիկան էլ է կեղտոտ գործարքի մեջ եղել նացիստների հետ

«Չեյս Մենհեթեն» բանկը, «Ջեներալ մոտորսը» եւ «Ֆորդը» կապեր են ունեցել Բեռլինի հետ: Այժմ եկել է հաստատելու ժամանակը: Ստորեւ թարգմանաբար հատվածներ «Նյուզուիքի» հեռագրությունից:

Տիսունվեց տարի անց «Չեյսի» իրավահաջորդ «Չեյս Մենհեթենը» այսօր կարող է կանգնել դատարանի առաջ: Իրավաբանները պատրաստվում են նյույորքյան այդ հոյակավոր բանկին դատի տալ ճիշտ այնպես, ինչպես Ֆրանսիական մի քանի բանկերի, եւ Բրիտանիայի «Բարկլիզ բանկին» են դատի տվել: Սեղադրանքն այն է, որ պատերազմի տարիներին գործելով Ֆրանսիայում, այդ բանկերը, նույնիսկ նացիստների արձակած հրամանից էլ առաջ, փակել են իրենց մոտ պահ դրված բոլոր հրեական հաշիվները նպաստելով հրեական ունեցվածքների հետեւողական թալանին: «Չեյսի» խոսնակ Քեն Հերցը հայտարարել է, որ շաբաթ լուրջ են մոտենում հարցին, եւ եթե նման բան է տեղի ունեցել, բանկը անպայման կհատուցի ավանդատուներին: Իրավաբանները ենթադրում են նաեւ մեկ ուրիշ «Մորգան բանկի» հարցը նույն մեղադրանքով: Ցուցակը կարող է շարունակվել: Ողջակիզումը ուսումնասիրողների մեծամասնությունը հավատացած է, որ ամերիկյան համագործակցությունը դաշնակիցների հետ եղել է մակերեսային, համեմատած հատկապես Եվրոպայի «չեզոք» երկրների (Շվեյցարիա, Շվեդիա, Իսպանիա) ֆիրմաների հետ, բայց այսօր թվացյալ մակերեսայնության տակ հավանաբար շատ ավելի խորը մեղսակցություն է եղել: Վերջերս հայտնաբերված փաստաթղթերն ապացուցում են, ըստ արդարադատության նախարարության նախկին աշխատակից, պատմաբան Մարկ Մասուրովսկու, որը ողջակիզման ժամանակ թալանված արվեստի գործերի փոխհատուցման ծրագրով է զբաղվում, որ առնվազն 300 ամերիկյան ընկերություններ պատերազմի ողջ ընթացքում Գերմանիայում գործարարությամբ են զբաղվել: Նույնիսկ բենզոլ հետ առեւտուր չանելու վերաբերյալ պաշտոնական օրենքի առկայության դեպքում կողմնակի առեւտուրը ծաղկել է հաճախ չեզոք երկրների միջոցով:

Երեք խոշորագույն ավտոմեքենաշինական գործարաններից երկուսը «Ֆորդը» եւ «Ջեներալ մոտորսը» նույնպես դիմագրավում են մեղադրանքներ, որ նրանց գերմանական մասնաճյուղերը աշխատեցրել են բազմաթիվ գերի հրեաների: Հենրի Ֆորդը ճանաչված հակասեմական է եղել, որին Հիտլերն իր ներշնչանքն է համարել:

Շվեյցարական բանկերի դեմ հարուցված մեծ աղմուկից մոտ երեք տարի անց, ողջակիզումը վերապրողներն այժմ փոխհատուցման իրենց արավի թիրախն են դարձրել Ամերիկան: Դեկտեմբերի սկզբներին 44 երկրների ներկայացուցիչներ Վաշինգտոնում համագումար էին նատեր»: «Բոշը», ինչպես հայտնի է, գերմանական մարտկոցների մասեր արտադրող ֆիրմա է, եւ համաձայնագրով փաստորեն նացիստների հսկողության տակ էր դրվում դրա ամերիկյան մասնաճյուղը: Փաստաթղթերն այդ ժամանակ պատրաստել է Ջոն Ֆոստեր Դալեսը, որը հետագայում դարձավ արտգործնախարար, եւ որի անունով է կոչվում այսօր Վաշինգտոնի միջազգային օդանավակայանը: Նա հայտնի էր իր գերմանամետ հայացքներով: Այդ փաստաթղթերի հիման վրա «գործարքը» ուժի մեջ է մնում մինչեւ 1948 թիվը, որից հետո աճուրդի միջոցով «Բոշը» վաճառվում է ամերիկացիներին: «Նման մարդիկ հավատարմություն են ցուցաբերում ոչ թե պետության, այլ անձնական շահերի հանդեպ», նշում է Մասուրովսկին մեջբերելով գանձապետարանի աշխատակցի խոսքերը՝ ուղղված «Չեյսին» եւ «Մորգանին»: Դալեսի որդին էյվրին, որը կաթոլիկ քահանա է, ասում է, թե անտեղյակ է եղել այդ գործարքից, բայց հիշում է, որ հայրը «գնալով ավելի էր անհանգստանում գերմանացիների հետ ունեցած «Սուլիվանի» կապերով»:

Նման մարդկանց պատասխանատվության կանչելու հարցը չի իրականացել մասամբ էլ այն պատճառով, որ 1940-ի վերջերից սկսած հականացիստական շարժումը փոխարինվեց հակակոմունիստական շարժումով, եւ սառը պատերազմը եկավ խոցակելու անցյալի մեղերը:

Արդարությունը վերականգնելու ներկա փորձերը գուցե հաջողության հասնեն, սակայն ոմանց կարծիքով դա չափազանց մեծ ռիսկի գործ է: Ողջակիզումը վերապրած մարդկանց մի մասը չի ցանկանում այս ռիսկին դիմել՝ վախենալով, որ դա կարող է զարթնեցնել նախկին ատելությունը հրեաների նկատմամբ: Ուրիշները փողային հատուցման ետեւից ընկնելը համարում են ողջակիզման ոգեղեն զոհերի եւ բարոյական հիմունքների ոտնահարում:

Բայց հետագոտությունները շարունակվում են եւ ինչպիսին էլ լինեն արդյունքները, դրանք անտարակույս լույս կսփռեն ամերիկյան պատմության այդ մութ էջերի վրա:

Հ. Ծ.

ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔ

Ամերիկյան ինքնաթիռները գրոհել են Իրաքի նավթի ձեռնարկությունների ու քաղաքացիական օբյեկտների վրա

ԿԱՀԻՐԵ, 2 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Երկուշաբթի օրը ամերիկյան ինքնաթիռները հարվածներ են հասցրել Իրաքի հյուսիսի նավթի ձեռնարկություններին եւ քաղաքացիական օբյեկտներին: Ինչպես հայտարարել է Իրաքի պաշտոնական ներկայացուցիչը, օդային հարձակման են ենթարկվել ուղղանցույցով նավթամղման նկատմամբ վերահսկողություն իրականացնող Զահուի կայանը եւ Այն Զահլա բնակելի շրջանը՝ Մոսուլի մոտակայքում: Զոհերի մասին չի հաղորդվում: Հյուսիսային Իրաքի նավթընկերության գլխավոր տնօրեն Թալյալ Աշուրի խոսքերով, կայանի լրիվ վերականգնման համար կպահանջվի առնվազն չորս շաբաթ: Նավթի օբյեկտների վրա ձեռնարկված հարձակման կապակցությամբ Սադդամ Հուսեյնը Իրաքի բարձրագույն ղեկավարության նիստ է անցկացրել: Երկրի ԻՆԱ լրատվական գործակալությունը վկայակոչել է նրա այն խոսքերը, որ «արաբական նավթը հակաիրաքյան պատժամիջոցների վերանցումից հետո էլ անորոշ ժամանակով կմնա ամերիկյան եւ սիոնիստական իմպերիալիզմի վերահսկողության տակ: Մինչդեռ ԱՄՆ-ի զինվորական հրամանատարության ներկայացուցիչը հայտարարել է, թե երկուշաբթի օրը ամերիկյան ինքնաթիռները ռմբակոծել են Իրաքի հաղորդակցության օբյեկտները եւ հակաօդային պաշտպանության միջոցները երկրի հյուսիսում՝ արգելագոտում: Նրա տվյալներով, դրանց վրա երեսուն ավիառումբ է նետվել լազերային ուղղորդմամբ:

«Հզբոլլահը» կշարունակի զինված պայքարը

ԿԱՀԻՐԵ, 2 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Լիբանանի «Հզբոլլահ» կազմակերպությունը (Ալլահի կուսակցություն) հայտարարել է, որ կշարունակի զինված պայքարը իսրայելական օկուպացումից Հարավային Լիբանանի ազատագրության համար, չնայած Իսրայելի սպառնալիքներին՝ վրեժ լուծելու իսրայելցի զինծառայողների զոհվելու համար: Ինչպես այսօր հաղորդել է Կահիրեի ռադիոն, «Հզբոլլահի» ղեկավարի տեղակալ Նաիմ Քասեմը երկուշաբթի օրը հայտարարել է. «Ոչինչ մեզ չի սփոփի դադարեցնելու իսրայելական զորքերի եւ «Հարավային Լիբանանի բանակի» նրանց խամաճիկների դեմ գործողությունը, որովհետեւ մենք դրա օրինական իրավունքն ունենք»: Ըստ Բեյրութից ստացված տեղեկությունների, Լիբանանի նախագահ էմիլ Լահուդը հեռախոսով Սիրիայի ղեկավար Հաֆեզ Ասադի հետ քննարկել է երկրի հարավում ստեղծված իրավիճակը: Միաժամանակ Լիբանանի վարչապետ Սելիմ Հոսը շփումներ է ունեցել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամ պետությունների հետ եւ նրանց հայտարարել իր դեմ «հատուցման գործողություն» իրականացնելու Իսրայելի սպառնալիքների առնչությամբ Լիբանանի խոր մտահոգությունը:

Հ. Շիբերս. «Շրջադարձի մեթոդն անհամոզիչ է»

Հորսթ Շիբերսը գերմանական Քիլ քաղաքի համաշխարհային տնտեսության ինստիտուտի նախագահն է եւ Գերմանիայի կառավարության հինգ խորհրդականներից մեկը: «Էքսպրես» հանդեսի թղթակցին տված հարցազրույցում նա իր մտահոգությունն է արտահայտում կանցլեր Գերհարդ Շրյոդերի տնտեսական քաղաքականության առթիվ:



– Կարելի՞ է ասել, թե Գերմանիան գործազրկության կրճատման ճանապարհին է:

– Իհարկե ոչ: Եթե այս տարի կառողանալինք գործազուրկների թիվը 1998 թ. համեմատությամբ մոտ 200 հազարով կրճատել, դա արդեն շատ լավ կլիներ: Բայց Գերմանիայում հունվարին գործազուրկների թիվը հասավ 4,5 միլիոնի: Հարկ է նշել, որ վերջին երեք տասնամյակների լճացումներից յուրաքանչյուրը (1974-1975, 1981-82 թթ., 1993 թ.) մեկ միլիոնով ավելացրեց գործազուրկների թիվը: Եվ ամեն անգամ մենք պահպանեցինք նոր թվակազմը: Եթե նախկան հաջորդ լճացումը անհրաժեշտ միջոցներ չձեռնարկենք, ապա էլ ավելի շատ գործազուրկներ կունենանք:

– Ի՞նչ պետք է արվի:

– Հարկավոր է բարեփոխել մեր աշխատանքի տուկան: Ահա երկու օրինակ: Մի նոր օրենքով պետք է թույլատրել, որ նոր աշխատանքի ընդունված մեկը, մասնավորապես երբ խոսքը գործազուրկի մասին է, ոչ բոլոր դեպքերում վարձատրվի կոլեկտիվ պայմանագրով նախատեսված չափով: Մեկ ուրիշ օրենք պետք է խրախուսի աշխատավարձի հետ կապված բանակցությունները ձեռնարկության մակարդակով, մինչդեռ այսօր դրանք անցկացվում են ճյուղի մակարդակով եւ հաշվի չեն առնում յուրաքանչյուր առանձին ընկերության տնտեսական վիճակը:

– Ձեր կարծիքով Շրյոդերի կառավարությունը պատրա՞ստ է այդ ուղեգծին:

– Կառավարությունը դեռ մտածում է իր ռազմավարության մասին: Բայց այնտեղ առկա են տարամետ ուժեր, ոմանք կողմ են սպառման ընդլայնմանը, մյուսներն էլ պահանջում են ավելացնել ներդրումները եւ մասնագետների պատրաստմանը հատկացվող գումարները: Բացի դրանից, Շրյոդերի մեթոդն անհամոզիչ է. կանցլերը թողնում է, որ խնդիրները «խմորվեն», իսկ քաղաքական ճնշումներն ազատորեն արտահայտվեն: Ապա նա ներկայանում է որպես մոխիրներից հառնող փյունիկ, ձեռին՝ պատրաստի լուծումներ: Բայց կառավարության այդ գործելակերպն անորոշություն եւ անվստահություն է ծնում Գերմանիայում եւ արտասահմանում:

– Դրանք բերեց անփորձության հետ կապված սխալներ են:

– Երկյուղներ ունեմ, որ Գերմանիան ճապոնիայի նման կորցրած լինի սեփական խնդիրների լուծման ունակությունը: Նախորդ կառավարության օրոք դա արդեն նկատելի էր: Նախապատվությունը տրվում է սատուս քվոյի պահպանմանը, իսկ դրա հետեւանքով վաս եմք հարմարվում համաշխարհային տնտեսական զարգացման ընթացքին: Ձեռնարկությունները խոշոր ջանքեր են գործադրել մրցունակ դառնալու համար: Այսօր պետությունն է, որ պետք է բարեփոխի հարկերի եւ սոցիալական պաշտպանության համակարգերը: Նույնը կարելի է ասել Ֆրանսիայի եւ Իտալիայի մասին: Եվրոպայի երեք խոշորագույն պետությունները բախվում են միեւնույն խնդիրներին: Միակ տարբերությունն այն է, որ Գերմանիայում երիտասարդների գործազրկության մակարդակն այնքան բարձր չէ, որքան Ֆրանսիայում:

Պ. Ռ.

ԱՍԻԱ

Ինդոնեզիայում շարունակվում են արյունալի բախումները

ՋԱԿԱՐՏԱ, 2 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Անցած երկուշաբթի օրը անկարգությունների դեմ պայքարի հունտկ գորամաս է ստեղծվել Ինդոնեզիայի զինված ուժերի կառուցվածքում: Գրեթե 3,5 հազար զինվոր ու ժերի կառուցվածքում: Գրեթե 3,5 հազար զինվոր ու ժերի կառուցվածքում սպա ունեցող այդ մարտական միավորը կոչված է իր մեջ զուգակցել զուտ ռազմական խնդիրների կատարումը հետախուզական, ոստիկանական եւ քննչական գործառույթների հետ: Մինչ այդ Ինդոնեզիայի արեւելքից շարունակում են հաղորդումներ ստացվել Ամբոն կղզում եւ հարեւան քաղաքում: Մոլուքյան կղզիների վարչական կենտրոնում, քրիստոնյաների եւ մահմեդականների արյունալի ընդհարումների մասին: Անցած օրը Ամբոնում եւ նրա շրջակայքում ընդհարումների եւ անկարգությունների մասնակիցների վրա կրակ բացած զինվորականների գործողությունների հետեւանքով, առայժմ չհաստատված պաշտոնական տվյալներով, զոհվել է տուրջ տասը մարդ: Կան վիրավորներ: Հրկիզվել են մահմեդականների տներ:

Ղազախստանը կրճատում է բանակը

ԱԼՄԱԹԻ, 2 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ղազախստանի բարձրագույն ղեկավարությունը սենսացիոն բնույթի քայլի է դիմել: Ինչպես այսօր ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի թղթակցին հաղորդեցին հանրապետության պաշտպանության նախարարության մամլո ծառայությունում, հանրապետության ղեկավարությունը որոշել է արդեն առաջիկա ամիսներին կիսով չափ կրճատել իր զինված ուժերի թվակազմը: Դա կվերաբերի միայն շարքային ու սերժանտային կազմին: Նրանց համար բանակում ժամկետավոր ծառայության տեւողությունը երկու տարվանից կնվազի մինչեւ մեկ տարի: Դրա հետեւանքով ընթացիկ տարում երկրի պաշտպանական գերատեսչությանը պետքյուջեից 40 տոկոսով պակաս միջոցներ են հատկացված, քան նախորդ տարում: Ծառայության ժամկետի կրճատումը Ղազախստանում սկսված արմատական բանակային բարեփոխման հետեւանքն է, որի նպատակն է հանրապետության անցումը փորձաթիվ, տեխնիկապես լիովին հագեցած եւ պրոֆեսիոնալ զինված ուժերի: Այդ գաղափարի իրագործումը նախատեսվում է սկսել 2000 թվականից, բայց պրոֆեսիոնալ բանակի լավագույն մոդելն արդեն այժմ մշակվում է Ալմաթիայում տեղաբաշխված առաջին մոտոհրաձգային բրիգադի հիմքի վրա:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Նաեւ թատերագիր, կամ բանաստեղծուհու սիրանքը

Փոքր էկրանի թատրոնն արդեն 12 տարեկան էր. բայց «բնամիները կօգտագործեն» կարգախոսով մեր արատների մասին լռում էր կամ «ծիկրակում» երգիծական-կենցաղային «անմեղ» հաղորդումներով: Առաջին «կրակոցը» Հրանտ Մաթեւոսյանի «Կայարանը» եղավ... հետո սփռված էին «չմեղ» երեւալ... Միայն յոթ տարի անց հայտնվեց Սիլվա Կապուտիկյանի «Եվ դո՞ւ, Բրուտոս»-ը, որը համազոր եղավ մի ամբողջ «ռմբահարումի»...

Այսօր իր փառահեղ 80-ը բոլորող բանաստեղծուհու մնարերգությանն ու արձակին բոլորն են քաջածանոթ, սակայն քանի՞սը գիտեն նրա թատերգության մասին. թերեւս միայն նրանք, ովքեր 24 տարի առաջ դիտեցին «Եվ դո՞ւ, Բրուտոս»-ը: Այսօր խղճի դեմ կլիներ լռել, որ տիեսը ոչ մի կերտ եթեր չէր տվի, եթե այն ժամանակ հեռուստատեսկոմի նախագահը՝ «խիզախ սատունցին» (այդպես էինք կոչում Ստեփան Պողոսյանին) չլիներ, որ ինչպես Պ. Սեւակը կասեր՝ դարձավ «շանթ ու շանթարգել»: Մասնակիցն էր ռեժիսոր Օլգա Մելիք-Վրթանեսյանի (գլխ. խմբ. Պերճ Ստեփանյան) ու խմբագրության հետ բոլոր մանրուքներով էկրանային տարբերակի մշակմանը: Հեղինակը կրկնս, քաղաքացիական ոգով առաջին անգամ դեմդիմաց էր բերում մեր կյանքն ուղորդող երկու խոշորագույն լծակները՝ կուսակցական, պետական-պաշտոնական անձանց ու գարկում իրար, հիմնիվեր ավերակելով քաղաքական-տնտեսական-բարոյական ինստիտուտները: Մոսկվայում բարձրաստիճան ռազմական գեներալ, այժմ՝ կուսվերահսկողության հանձնախմբի նախագահ Գեւորգ Վահանյան եւ մինիստրության շինարարական բաժնի պետ, բազմաֆայլ առ ֆայլ Մալյանը երեւակում է Շահինյանի բամբասասիրությունը, սեռ գործարքների հակումը, կաշառք տալու-առնելու սովորությունը: Ի՞նչ հաճույքով է մատուցում շեֆին բամբասող, իսկ երեսին շաղակրատող իր հերոսին... Սակայն ամեն ինչում գեղարվեստական չափի զգացումը, որ նաեւ ինտելեկտուալ խաղի դրոշմ ունի, կերպարը զերծ է պահում միագիծ լինելուց: Ավելին. Մալյանը դրամատիկ երկվություն է հաղորդում կերպարին: Ազնիվ աղրելու Վահանյանի հորդորը լսելով, մի պահ լռում է, ապա.

– Կարծում ես ես չե՞մ ուզում: Շեմ կարող: Ուշ է...

ախորժակով համտեսում: Կնոջ մեղմ հանդիմանությունը լսելով՝ չինական առածի հինգ հազար մղոնանոց ճանապարհի առաջին քայլի մասին, լայն ժպտում է. կաշա՞ռք. ո՞չ...

– Ամուսինների, բոնուհու, մինչեւ իսկ Նովոսիբիրսկից հեռաձայնող հարսի հետ ունեցած փոխհարաբերություններում իշխում են ընտանեկան ու մարդկային փոխըմբռնման ասպնջական հարաբերությունները: Եվ Վահանյանի բարոյական հաղթանակով էլ պսակվում է հանգուցալուծումը, իսկ մինչ այդ Շահինյանն, արդեն համոզված, որ ներքին տեւական գոտեմարտը ավարտվել է իր հաղթանակով, կան չէ, որ հեղինակը հենց այս վանեցի մամիկին է դարձնում երկու հակառակորդ կողմերի բացատրության ակամա վկան ու դատավորը:

Խաչակերների տեսարանը բազմամարդ է. հերթական խաչին հավաքվել են մինիստր Մախմուրյանն ու իր «արքանյակները», նրանց կանայք: Սրանք են այս աշխարհի տերերը. ոչ մի բան առանց սրանց չի լուծվում. սկսած շինարարության, բնակարանի բաշխման, բանակային ծառայությունից ազատելու, ոմանց բանտ դնելու-ազատելու, բուհական ընդունելության, ավարտած գիտական կոչումների շնորհման հարցերից, մի ամբողջ պետություն: Նրա փառահեղ գլուխը մինիստր Մախմուրյանն է. նա իրոք փառահեղ է Մամիկոն Մանուկյանի անձնավորմամբ: Պարթեւ, գեղեցիկ, նրբագեղ հագուկապով, մեծահոգի, խելացի: Ինչպե՞ս է բաժակաճառեր ասում. ամեն ինչում նրբամիտ, բարեհոգի, մեծ արժանապատվություն: Հապա ինչպես է երգո՞ւմ իր բավշյա բարիտոնով «Աղջի Մարալ»-ը... Միայն մեկն իրավունք ունի նրան խայթելու. դա նրա չափազանց երիտասարդ կինն է՝ Մարինեն: Հեղինակը նկատելի արգահատանքով է կաղապարել այս կարիերիստ լրագրողուհուն: Ճարպիկ աղջիկ

ՄՈՍԿՎԱ

«Հայաստանի ոսկին» ֆիլմաշարի շնորհանդեսը՝ դեսպանատանը

ՄՈՍԿՎԱ, 2 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Օրերս Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպանատանը կայացավ ընդունելություն՝ շնորհանդես նվիրված «Հայաստանի ոսկին» ընդհանուր անվանմամբ նկարահանվող ֆիլմաշարին, որի առաջին ֆիլմը ցուցադրվել է ՕՌՏ հեռուստաալիքով «Ճանապարհորդների ակումբ» հաղորդաշարի ժամանակ:

Առաջին ֆիլմը նկարահանվել է ՀՀ առեւտրի եւ արդյունաբերության նախարարության հովանավորությամբ, իսկ ցուցադրման հովանավորն է մոսկովյան «ՊԱ եւ ՊԱ» բաժնետիրական ընկերությունը (տնօրեն Արյոմ Մարտիրոսյան):

Ընդունելության ժամանակ ելույթ ունեցան Ռուսաստանում Հայաստանի դեսպան Գագիկ Շահբազյանը, ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի փոխնախարար Մովսես Չավարյանը, «Ճանապարհորդների ակումբ» հաղորդաշարի հեղինակ Յուրի Սենկեւիչը, ՌԴ Պետդումայի փոխխոսնակ Արթուր Չիլինգարովը եւ ֆիլմի տնօրեն-պրոդյուսեր Ասոն Ասլանյանը:

Ներկա էին Մոսկվայի հասարակական գործիչներ, մամուլի եւ հեռուստատեսության աշխատակից-

digitised by A.R.A.R.@

Մարզական

ՀԱՕԿ

Համաժողովն ավարտվեց, բանավեճերը շարունակվում են

Հանրաժողովության մարզական կյանքում անհանգիստ իրավիճակ է: Պատճառը Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի օրերս կայացած գլխավոր համաժողովի հատուկ նիստն է: Ավելի ճիշտ՝ նրանում անցկացված ընտրությունները: Հիշեցնենք, որ բուռն ընթացած նիստում, չհամաձայնվելով բաց ընտրություններին, իրենց համախոհների հետ դահլիճը լքեցին ՀԱՕԿ-ի նախագահի երկու թեկնածուներ՝ Յուրի Վարդանյանը եւ Ալեքսան Ավետիսյանը: Այնուամենայնիվ, նրանց եւ Բենուր Փաշայանի թեկնածությունները դրվեցին քվեարկության, որին 111 պատգամավոր մասնակցեց: Արդյունքում Փաշայանը ընտրվեց ՀԱՕԿ-ի նախագահ: Փոխնախագահներ ընտրվեցին Միքայել Իսպիրյանը եւ Աշոտ Մելիք-Շահնազարյանը, գլխավոր քարտուղար՝ Նշան Մունչյանը: Ընտրվեց նաեւ գործադիր կոմիտե, որի կազմում 11 անդամներ են՝ Վահրամ Առաքելյան, Արմեն Գրիգորյան, Սամսոն Խաչատրյան, Օգսեն Միրզոյան, Սմբատ Լալուշյան, Վարդեւան Գրիգորյան, Դերենիկ Գաբրիելյան, Բագրատ Բուռնազյան, Ռոբերտ Տիգրանյան, Հրաչյա Պետիկյան, Հովհաննես Ավետիսյան:

Ինչ խոսք, Ալեքսան Ավետիսյանն ու Յուրի Վարդանյանը դժգոհ են համաժողովի նիստի ընթացքից: Նրանք հանդես են եկել հայտարարությամբ, որում մասնավորապես, ասվում է. «Մենք ԱՕԿ-ի նախագահի թեկնածուներ Ա. Ավետիսյանն եւ Յու. Վարդանյանս, անօրինական համարելով 1999 թ. փետրվարի 26-ին կայացած ԱՕԿ-ի գլխավոր համաժողովի հատուկ նիստի արդյունքները, որ կատարվեցին բացահայտ կեղծիքի, ճնշման պայմաններում, դիմել ենք իրավասու մարմիններին՝ ՀՀ արդարադատության նախարարությանը, վերին աստյաններին, ընդհուպ ԵՕԿ-ին, ԱՕԿ-ին՝ չեղյալ հայտարարելու այդ արդյունքները, գումարելու նոր համաժողով:

Հանրությանը տեղեկացնում ենք, որ պորտի պետական կառույցի ղեկավարները դեռ համաժողովից մի քանի ամիս առաջ, անառողջ մթնոլորտ էին ստեղծել մարզական բնագավառում ձայներ հավաքելով իրենց կողմից առաջադրված թեկնածուի օգտին»:

Ավետիսյանն ու Վարդանյանը հայտարում են, որ մեծ թվով խախտումներ, կեղծիքներ են թույլ տրվել: Այդ հարցերին էր նվիրված նաեւ Ա. Ավետիսյանի մամուլի ասուլիսը:

Պատասխան հայտարարությամբ հանդես են եկել ՀԱՕԿ-ի նորընտիր նախագահ Բենուր Փաշայանի կողմնակիցները՝ երկու տասնյակից ավելի հանրահայտ մարզիկներ՝ օլիմպիական խաղերի, աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոններ: Բերում ենք մի հատված այդ հայտարարությունից. «Համաժողովում բավականին լուրջ ճնշումներ եղան ՀԱՕԿ-ի գործունեության վերաբերյալ եւ լավ, եւ վատ առումներով: Արձանագրելով կանոնադրական մի քանի լուրջ խախտումներ, ՀԱՕԿ-ի անդամները պահանջեցին պորտը չքաղաքականացնել եւ թույլ տալ մարզաշխարհին ազատ արտահայտելու իր կամքը:

...ՀԱՕԿ-ն իր ամբողջ պատմության ընթացքում քվեարկության փակ ծեւ չի տեսել:

Ըստ ՀԱՕԿ-ի կանոնադրության 19 հոդվածի 3 կետի «ՀԱՕԿ-ի գլխավոր ասամբլեայում, գործկոմի նիստում, որպես կարգ, որոշումներն ընդունվում են անմիջական բաց քվեարկությամբ: Օրակարգի առանձին հարցերով ներկա անդամների մեծամասնության որոշմամբ որոշումներ կարող են ընդունվել նաեւ քվեարկության այլ ձեւով»:

Երբ նախագահը պատրաստվում էր կազմակերպել քվեարկություն՝ Ալեքսան Ավետիսյանը եւ Յուրի Վարդանյանը (վերջինս հայտարարեց, որ ինքը կառավարության հրավերով է եկել, որպեսզի դառնա ՀԱՕԿ-ի նախագահ) փորձեցին ճնշում գործադրել դահլիճի վրա: Նրանց կողմնակիցները, որոնց մեջ՝ ցավոք սրտի կային Աժ պատգամավորներ եւ այլ պատասխանատու պաշտոնյաներ, ավելի հեռուն գնացին՝ օգտագործելով անվայելուչ արտահայտություններ: Չկարողանալով կոտրել մարզաշխարհի կամքը՝ Յուրի Վարդանյանը հայտարարեց, որ իր կողմնակիցներով լքում է դահլիճը: Նրան միացավ նաեւ Ալեքսան Ավետիսյանը իր կողմնակիցներով: Դահլիճից հեռացան ՀԱՕԿ-ի 56 անդամներ: Մինչ այդ հաշվիչ հանձնաժողովը արձանագրել էր, որ դահլիճում ՀԱՕԿ-ի 209 անդամներից ներկա են 167-ը:

Մենք դատապարտում ենք այս արտառոց երեւույթը եւ հայտարարում ենք՝

Դահլիճում մնացած ՀԱՕԿ-ի 111 անդամներ քվեարկեցին առաջադրված 3 թեկնածուների համար, ուր ձայներ բաշխվեցին հետեւյալ կերպ՝ Ալեքսան Ավետիսյան՝ կողմ 0, դեմ 110, ձեռնպահ 1, Բենուր Փաշայան՝ կողմ 110, դեմ 0, ձեռնպահ 1, Յուրի Վարդանյան՝ կողմ 0, դեմ 110, ձեռնպահ 1: Մարզաշխարհը ընտրեց իր նախագահին, տեղակալներին, գլխավոր քարտուղարին եւ գործկոմի 11 անդամներին: Նրանց մեծ մասի անունը ծանոթ է մեր հասարակությանը: Մենք չէինք դիմի նման քայլի, որովհետեւ գիտենք, թե ինչ աղավաղված պատկեր կարող է ներկայացնել Ալեքսան Ավետիսյանը, փորձելով սեւացնել մարզաշխարհը եւ բնակչությանը գցել թյուրիմացության մեջ:

Մենք միշտ բարձր ենք պահել Հայաստանի պատիվն ու անունն աշխարհի բոլոր անկյուններում: Այսօր մենք միակուռ ենք, միակամ, եւ ոչ ոք այլեւս չի կարող մեզ խաբել կամ գցել թյուրիմացության մեջ»:

Իրենց դիրքորոշումը մարզաշխարհին, հասարակությանը ներկայացնելու նպատակով ՀԱՕԿ-ի նորընտիր ղեկավարությունը երեկ կազմակերպել էր մամուլի ասուլիս, որին մասնակցեցին՝ Բենուր Փաշայանը, Միքայել Իսպիրյանը, Սամսոն Խաչատրյանը, Իսրայել Հակոբկոխյանը, Նշան Մունչյանը, Լեւոն Ջուլֆալակյանը, Դերենիկ Գաբրիելյանը:

Նրանք պարզաբանեցին ԱՕԿ-ի եւ ՀԱՕԿ-ի կանոնադրության դրույթները, սպառիչ պատասխաններ տվեցին լրագրողների հարցերին:

ՇԱԽՄԱՏ

Առաջին շրջանն ավարտվեց

Իսպանիայի Լինարես քաղաքում ընթացող սուպերմրցաշարում անցկացվեցին 7-րդ տուրի հանդիպումները:

Առաջատարը՝ Գարրի Կասպարովը, նոր հաղթանակ տարավ, այս անգամ՝ Վեսելին Թոփալովի նկատմամբ: Դրանով իսկ ավելի մեծացավ միավորների տարբերությունը Կասպարովի եւ նրան հետապնդող Վլադիմիր Կրամնիկի ու Վիշվանաթան Անանդի միջեւ, քանի որ վերջիններս ոչ-ոքի ավարտեցին իրենց հանդիպումները համապատասխանաբար Պետեր Լեկոյի եւ Մայքլ Ադամսի հետ: Տուրի վերջին պարտիայում Վասիլի Իվանչուկը հաղթեց Պյոտր Սվիդլերին:

Յոթ տուրից հետո մրցաշարային աղյուսակը շարունակում է միանձնյա գլխավորել Կասպարովը, որը 5 միավոր է վաստակել: Մյուս մասնակիցների արդյունքներն այսպիսին են. Կրամնիկ, Անանդ՝ 4-ական, Ադամս՝ 3,5, Սվիդլեր, Թոփալով, Լեկո՝ 3-ական, Իվանչուկ՝ 2,5 միավոր:

Այսպիսով, երբ մրցաշարի առաջին շրջանն ավարտված է, կարելի է որոշ ամփոփումներ կատարել: Հիանալի է հանդես գալիս աշխարհի 13-րդ չեմպիոն Գարրի Կասպարովը: Նա 3 հաղթանակ է տարել, իսկ 4 պարտիա ավարտել է ոչ-ոքի արդյունքով: Հետաքրքիր է, որ բոլոր հաղթանակները Կասպարովը տարել է սեւ գույնով խաղալիս (շախմատիստներն ավելի հաջող են խաղում սպիտակներով): Նա հաջողության մեծ հնարավորություններ ուներ եւս մեկ պարտիայում, սակայն իր հիմնական մրցակիցներից մեկի՝ հնդիկ Վիշի Անանդի հետ խաղալիս բաց թողեց հաղթանակը: Սպասվում էր, որ հաղթողի կոչման համար Կասպարովից բացի, կպայքարեն նաեւ աշխարհի երկրորդ եւ երրորդ շախմատիստներ Անանդն ու Կրամնիկը: Նրանք այժմ առաջին եռյակում են, սակայն կարո՞ղ են հասնել Կասպարովին:

Լինարեսի մրցաշարն ըստ ԲԻԴԵ-ի դասակարգման սանդղակի ունի շատ բարձր՝ 20-րդ կարգ (ուշ մասնակիցների միջին անհատական գործակիցը 2735 է): Հիշեցնենք, որ անցյալ տարվա նույնանման մրցաշարը 21-րդ կարգի էր, բայց այն ժամանակ հանդես էին գալիս աշխարհի յոթ ուժեղագույն շախմատիստներ: Բայցեւայնպես, նման բարձրակարգ մրցումներ շախմատի պատմության մեջ հիշ են անցկացվել:

ԲՈՒՏՔԱՍՍԱՐՏ

Պատանիները գոհացնում են

Սեւան քաղաքում անցկացվեց պատանեկան հանրապետական բաց մրցաշար: Երկու տարիքային խմբով անցկացված մրցումներում հանդես եկան հանրապետության տարբեր մարզերի շուրջ 140 մարզիկներ: Մրցաշարը, որը կազմակերպվել էր «Արագություն եւ հաղթանակ» մարզական ակումբի նախագահ Արա Սմբատյանի նախաձեռնությամբ, մեծ հետաքրքրություն էր առաջացրել. մշակույթի ակումբը միշտ լեփ-լեցուն էր մարզասերներով:

Հուրախություն մասնագետների, պատանի բռնցքամարտիկները բարձր պատրաստականություն ցույց տվեցին: Հատկապես լավ տպավորություն թողեցին Աբովյանի, Թայիրովի, Հրազդանի, Մարտունու, Գավառի ներկայացուցիչները: Լավագույն տեխնիկա ցուցադրեցին կրտսեր տարիքի պատանիներ Դավիթ Մկրտումյանը (Թայիրով, 40 կգ քաշային կարգ), Վահրամ Փահլեւանյանը (Վանաձոր, 36 կգ), ավագ տարիքի պատանիներ Արթուր Վարագյանը (Սեւան, 42 կգ), Արման Գրիգորյանը (Աղինջ, 48 կգ), Զոհրաբ Սաղոյանը (Սեւան, 52 կգ): Նշենք, որ նրանք, ինչպես նաեւ այլի ընկած այլ մարզիկներ, արժանացան հովանավորների սահմանած բազմաթիվ նվերներին:

Հայաստանյան բռնցքամարտի պատասխանատուներ Լեւոն Հովհաննիսյանը, Դերենիկ Գաբրիելյանը եւ Ֆեդյա Ալեքսանյանը, որոնք ուշիուշով հետեւում էին պատանիների մենամարտերին, բարձր կարծիք հայտնեցին մրցումների մասնակիցների պատրաստականության վերաբերյալ:

Ասենք, որ պատանի բռնցքամարտիկների համար լավ պայմաններ էին ստեղծվել: Մասնավորապես, նրանք տեղավորվել էին հարմարավետ «Եթեր» հանգրվանում:

Երբ զայրանում է Թայսոնը

Ծանրաքաշային բռնցքամարտիկ, աշխարհի նախկին չեմպիոն Մայք Թայսոնը բանտում էլ է դրսեւորում իր մոլեգին բնավորությունը: Ընդամենը 20 օր է, ինչ նա ծաղերի ետեւում է հայտնվել մի քանի ամիս առաջ ավտոճանապարհային վթարի ժամանակ երկու հոգու վրա իր բռունցքների ուժը ցույց տալու համար, եւ ահա՝ նոր միջադեպ: Բանտապետ երկու վերակացուներ հայտնել են, թե Թայսոնին, եւ նա բանտախցի հեռուստացույցը վերցրել ու շպրտել է նրանց վրա: Առաջիկա 20 օրը «երկաթյա Մայքը» մենախցում կանցկացնի: Արգելված է նրա հետ որեւէ շփում՝ տեսակցություն եւ նույնիսկ՝ հեռախոսային կապ:

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է

ԱԶԳ

Օրվա հեռատես

ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՔ

Քաղաքական վենդետայի վերջին դրվագները Ազգային ժողովում

Սկիզբը էջ 1

Չեզանից ո՞վ համոզված չէ, որ Վանոն մեղավոր է

«Հանրաքեությունն» խմբակցությունը. Արա Սահակյանի շուրթերով հիշեցրեց «Երկրապահին» իր վրեժը քաղաքական հեռատեսությունները, ինչն ասելով. նրանք նկատի ունեին Վանո Սիրադեղյանին ոչազգամավորական անձեռնմխելիությունից մասնակի զրկելու փաստը: Նրանք կարող մտնել այդ հրապարակ, հաստատ համոզված լինելով, որ իրենց էլ կդիմավորեն սուլոցներով: Ժողովրդի ոգեղեն լիցքը կորստյան մատնվեց, եւ մեղավորը ՀՀՇ-ն կուսակցություն դարձրածներն էին: Պատերազմի տարիներին հայրենասեր մարդիկ չէին մտնում քաղաքականություն կարծելով, որ կարեւորը սահմանների ու Արցախի ոչաշտպանությունն է: 98-ի փետրվարին ոչարգվեց, որ Լեւոն Տեր-Պետրոսյանը

[illegible] «Ազատություն» հայ ժողովրդի հիշատակը՝ Եա՝ միության ճերեւ- խիզեանի Հանրաքեությանը վերա- փոխանցնելու, որոնց խնդրը՝ 23 Մարտին ոչ մի բան չի ասվեց: Ինչպես նաեւ 13-ի Կարսի ոչայմանագրի՝ Հա- [illegible]

[illegible] ոչնչեցրն, որ իշխանափոխության հեղինակ հայտնի ուժերի ոչաճառով Վանո Սիրադեղյանն այսօր ուշի ծանր տագնաոչ է առրում, եւ նրա առողջությանը վտանգ է սպառնում: Արա Սահակյանը չմոռացավ նաեւ 20 ՀՀՇ անդամների հեռացումը իրենց ոչաշտոններից, ինչպես նաեւ հանրաքեությունում առկա X-60 դղյակների առկայությունը, որն իրենցը չէ: ՀՀՇ-ն հանձն առավ միայն 60 դղյակների հեղինակային իրավունքը: «Ուղիղ մեկ տարի ՀՀՇ-ի եւ «Հանրաքեություն» խմբակցության ընդերից դուրս չի եկել ոչ մի փաստաթուղթ, որը կասկածի է ենթարկել իշխանության լեգիտիմությունը», ի մի բերեց Արա Սահակյանը: Սա ոչատասխան էր խորհրդ Հարությունյանի մեղադրանքին, թե Ամոսն ՀՀՇ-ն է ծնունդ նետել եւ սկսել քաղաքական վենդետա: Ամ խոսնակը ցավով նշեց, թե իրավացի են այն ոչնդումները, որ նոր ընտրությունները ընթանալու են հեռեւյալ սկզբունքով. «Կհաղթի նա, ով շատ կհայհոյի ՀՀՇ-ին եւ նախկին իշխանություններին»: Ամ փոխխոսնակ Յուրի Բախչյանից հետո խորհրդ Հարությունյանը խաղաղության ծիրակ դրոշ առաջարկեց ՀՀՇ-ին, բայց մերժվեց: Այբերս Բազեյանն ստիպված էր ոչատասխանել. «Չեզանից ո՞վ համոզված չէ, որ Վ. Սիրադեղյանը մեղավոր է»:

ՀՀՇ-ն չի՛ մատնանշի Ամ ընտրությունների

մասնակցի Ամ ընտրությունների: Բաբկեն Արարքչյանին երկրորդը Այբերս Բազեյանը, հիշեցնելով մոտ 10 տարի առաջ Ազատության հրապարակը. 88-ին, երբ Կարեն Դեմիրճյանը [illegible] կամ անիրավաբար որոշմամբ Ադրբեջանի Հանրապետության կազմում [illegible] դեպքերի [illegible] 1924 թ. [illegible] 9-ի կոնվենցիան [illegible] ինքնավարություն» մեջ: Օգնոց մեղադրանքի է ան- [illegible] դիրքերի [illegible] ՀՀ տարածքում եւ սփյուռքում [illegible] 400 հազար [illegible]

[illegible] ինչը գրեթե հավասար էր «Հանրաքեություն» խմբակցության անդամների թվին, ինչը նշանակում էր, որ վարչապետի խորհրդական, ոչազգավոր Գագիկ Սինասյանին ներ- կայացված օրենքի նախագիծը «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», որը հնարավոր կդարձներ ըստ կարելվույն ուղղել ընտրական օրենսգրքում սպրդած վրիպումները եւ միգ թե շատ բնականոն ընտրությունների կայացումը, չէր կարող հիմնակվել առաջին ընթերցմամբ: «Երկրապահ» Գագիկ Սինասյանն առաջարկեց մինչեւ 15 օր ժամկետով հետաձգել քվեարկությունը:

Մինչեւ մայիսի 30 ընկած ժամկետը շատ-շատ կարճ ոչաս է ժամկետը սեղմվում է, այնինչ նոր- կա ընտրական օրենսգրքում անհեթեթության աստիճանի հասնող վրիպակներ կան, ինչպես օրինակ. նախընտրական քարոզչություն կատարելը կամ թեկնածուների եւ կուսակցությունների ներկայացրած հանձնագրերում ՀՀ տարածքում եւ սփյուռքում

[illegible] Ամ հանձնաժողովի [illegible] Ամ նախագահին [illegible] 33 [illegible] Հայաստանին վերաբերող կետերը: ՀՀ [illegible] ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, միջազգա- [illegible] դեպքերում [illegible] դեպքերում [illegible] 139, կետ 24, 27):

[illegible] Ամ [illegible] Ամ [illegible] Ամ [